

Թէ յափշտակութիւնք պատէ զիս յորժամ զմտաւ ածեմ եւ զառտնին պարս արհեստից նոցա, թէ քանի՛ցս գերագոյն հանճարով իցէ: Քանզի թէ պարք ժողովոց նոցին ի սոյն հանդիսի այսքան ճոխազարդու գութեամբ տեսանիւր՝ քանի՛ցս թէ զանխլաբար արհեստքն վայելչազարդք և գգուանք գրկանացն զարմանալի յերեւի յաչս սոփեստից: Չի թէ կանաչութիւն բուրաստանին ի հեռուստ զբօսնցոյց թմրեցոյց այսքան՝ քանի՛ցս թէ յորժամ արձակիցեն զհոտս իւրեանց բուրմամբ անուշից՝ զմալեցուցանեն. թէ տրտաքուստ ազդեալ ջերմութիւնք զմեզ տապացուցանէր՝ քանի՛ցս սառն սիրով նիւթովք արհեստից շաղապատումն ընդ հոմանիս (Էբէ):

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 35բ-37ա)

[Ա.Ն] ԽԱՀԱՏՈՒՐ ԿԱՔՈՂԻԿՈՍ ՍԱՅ

Ի գերապետական գլխոյն գերագոյացեալ եւ ի գերարուզիս աղբերէ գերազարդեալ եւ վերապատուեալ աթոռակցութեան Լուսաւորչին մերոյ հայրապետի երջանկի՝ մատուցանեմք Մարտիրոս երէց եւ Ամբակում սիրելիք քո համբոյրս երկնաչու գարշապարիդ:

Ուստի ուրախացեալ հոգով հրճուեցաք վասն արժանաւորելոյ յիշատակի քո կրկին նամակաւդ հանդերձ Տէր Տրդատիւս եւ վասն ծանուցանելոյ քո՝ եթէ չորք սրբոց աջք զոն չորից ազգաց ի պահպանութիւն կաթողիկոսարանիդ, որոյ արժանաւորեցարդ հայրենաւանդ վիճակիդ: Եւ մեք ի տենչանաց ըզձից սրտից մերոց մաղթեմք, զի ծաղկեցուցես զգաւազան իշխա-